

Ռ. Ս. Ղազարյան, Գրաբարի բառարան, Բ. Բ. Ա, Բ, Երևան, 2000:

Երկար դարերի ուղի անցած և փառավոր էջեր գրած հայ բառարանագրությունը հարստացավ մի նոր նվաճումով ևս: Նորերս Երևանի պետհամալսարանի աստվածաբանության ֆակուլտետը հրատարակեց հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչ և նույն ֆակուլտետի դասախոս՝ բ. գ. դ., պրոֆ. Ռ. Ղազարյանի երկհատոր «Գրաբարի բառարանը» (այսուհետև՝ ԳԲ)՝ «արդեամբ և ծախսից ֆակուլտետի դեկան՝ դոկտոր, պրոֆեսոր Ծահե արքեպիսկոպոս Աճեմյանի»: Որքան էլ զարմանալի, բայց փաստ է, որ ցարդ չենք ունեցել նմանատիպ բառարան, չնայած դրա անհրաժեշտությունը վաղուց էր զգացվում: Գնալով ավելի ու ավելի է մեծանում հետաքրքրությունը գրաբարի նկատմամբ: Այժմ այն սովորում են ոչ միայն Սփյուռքի, ինչպես նաև հանրապետության բազմաթիվ պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների բանասիրական, պատմության, արևելագիտության, ժուռնալիստիկայի և այլ ֆակուլտետների, այլև բազմաթիվ հանրակրթական դպրոցների հազարավոր ուսանողներ ու աշակերտներ: Սույն բառարանն իր ընդգրկմամբ, սկզբունքներով, կառուցվածքային առանձնահատկություններով և նպատակադրմամբ էապես տարբերվում է Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Բ. Բ. Ա, Բ, Երևան, 1979, 1981), (այսուհետև՝ ՆՀԲ) և Առձեռն բառարան հայկազեան լեզուի (Աճթիխաս, 1988), (այսուհետև՝ ԱԲ) բառարաններից, որոնք պարունակում են 5-ից մինչև 16-րդ դարն ընկած գրաբարի գրեթե ողջ բառապաշարը: ՆՀԲ-ն, գրված լինելով գրաբար լեզվով, իսկ ԱԲ-ն՝ ժամանակի գրական արևմտահայերենով, ըստ էության մատչելի չէին բոլորին: Այս տեսակետից անչափ մեծ է ԳԲ-ի նշանակությունը, որը, գրված լինելով արդի գրական հայերենով և արդի բառարանագրության պահանջներին հա-

մապատասխան, մեծապես նպաստում ու առավել արդյունավետ է դարձնում գրաբար լեզուն սովորողների գործը:

Բառարանի բառացանկի ընտրության համար, ինչպես նշում է հեղինակը, «հիմնական սկզբնաղբիւր է ծառայել դարազույս կազմող» «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» հոյակապ աշխատությունը: Հիմք ընդունելով հայոց լեզվի պատմության շրջանաբաժանման վերաբերյալ այժմ ընդունված մոտեցումը՝ նա վերցրել է ՆՀԲ -ից միայն այն բառերը, ոճերն ու դարձվածքները, որոնք վկայված են 5-11-րդ դարերից: Կարևոր սկզբնաղբյուր է եղել նաև, ըստ հեղինակի, Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը», որտեղից քաղել է «հայ հին մատենագրության տարբեր երկերում վկայուած ու ժամանակի ընթացքում մեծանուն հեղինակի կողմից յայտնաբերուած մի ամբողջ շարք նորագիտ բառեր, որոնք արձանագրուած չեն ՆՀԲ-ում» (էջ 5): Աճշուշտ, «Գրաբարի բառարանի» հեղինակը չի սահմանափակվել սոսկ նշված երկու կարևոր աղբյուրներով: Նա զգալի չափով օգտվել է նաև 5-11-րդ դարերի գրեթե ամբողջ հայ մատենագրությունից՝ քաղելով այնտեղից հարյուրավոր այնպիսի նոր բառեր, որոնք արձանագրված չեն ՆՀԲ -ում:

Բառարանի բառահողվածները օժտված են քերականական, իմաստաբանական, գործառական-ոճական նշումներով ու բացատրություններով, երբեմն էլ՝ գրավոր աղբյուրներից քաղված վկայություններով: Հեղինակը նշում է, որ բառերի քերականական - ձևաբանական բնութագիրը ներկայացնելիս հիմնականում առաջնորդվել է ՆՀԲ-ով, «որի հեղինակները հսկայական աշխատանք են կատարել բառերի քերականական տարբեր ձևերի բացայայտման ուղղությամբ» (էջ 6): Իսկ ինչ վերաբերում է բառերի զանազան նշանակությունների բնութագրմանը, ա-

պա այստեղ հեղինակը զգալի չափով օգտվել է հայերեն բացատրական բառարաններում եղած այն կարգի մեկնություններից, «որոնք առաել լրիւ և ճշգրիտ կերպով են բացայայտում բառերի իմաստների բովանդակութիւնը» (էջ 8):

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՆՀԲ-ում ամենայն մանրամասնությամբ տրված են բնագրային վկայություններ բառերի տարբեր ճշմանակությունների վերաբերյալ՝ հեղինակն իրավացիորեն ավելորդ է համարել բոլոր բառերի բազմազան կիրառությունները ներկայացնել համապատասխան օրինակներով: Բառարանում նման վկայություններով հիմնավորված են միայն այն բառերը, որոնք, ինչպես ճշում է հեղինակը, տարբեր պատճառներով տեղ չեն գտել ՆՀԲ-ում, կամ ունեն հազվադեպ գործածություն, կամ էլ՝ որևէ մասնավոր ճշմանակություն (տե՛ս էջ 8):

Հարց է ծագում. ինչու՞ գրաբարի բառացանկի ընտրության հարցում ամբողջովին շրջանցվել է ԱԲ-ի երկրորդ հրատարակությունը, որը 5000 բառով գերազանցում է ՆՀԲ-ին: Պատասխանը պարզից էլ պարզ կլինի, եթե նկատի ունենանք հեղինակի նպատակադրումը՝ բառարանում ընդգրկել միայն 5-11-րդ դարերի մատենագրությամբ ավանդված բառերը: Քանի որ ԱԲ-ում մյուս բոլոր բառերի նման ճշված 5000 բառերի ճշմանակությունները չունեն բնագրային վկայություններ, որով անորոշ է մնում դրանց կիրառությունների կոնկրետ ժամանակաշրջանի հարցը, ուստի դրանք չէին կարող ընդգրկվել լեզվական որոշակի պատմաշրջանի վերաբերող սույն բառարանում:

Մինչև այժմ հայագիտության մեջ չլուծված է մնում այն հարցը, թե ԱԲ-ի հեղինակը ինչ մասնավոր աղբյուրներից է քաղել վերոհիշյալ 5000 բառերից յուրաքանչյուրը, դրանք հայոց լեզվի զարգացման որ փուլին են վերաբերում՝ գրաբարյա՞ն, թե՞ միջինհայերենյան: ԳԲ-ն հնարավորություն է տալիս պարզելու ճշված 5000-ից հարյուրավոր բառերի գործածության ժամանակաշրջանի հարցը: Բառարանում ընդգրկված այն բոլոր բառերը, որոնք համարված են նորահայտ, բաժանված են երկու խմբի. ա) բառեր, որոնք

հայտնաբերվել են Հր. Աճառյանի կողմից և ամփոփվել նրա Արմատական բառարանում, բ) բառեր, որոնք հայտնաբերվել են սույն բառարանի հեղինակի կողմից: Նախ՝ առաջին խմբի բառերի մասին: ԳԲ-ում կան այս կարգի ավելի քան հարյուր հիսուն բառեր: Սրանցից մոտ հինգ տասնյակը տրված է ԱԲ-ում, ինչպես՝ անկարճ, խալատիկ, խարմեայ, խորակ, խուրբ, ծառայխտ, կաղտի, կեփաղ, հեռասեր, հեղեղաջուր, ճիճոնք, մող, յափրել (իմ), յուտմարել, նծուզաւոր, շնչհեղձուցիկ, որթաւոր, ուծութիւն, պահանք, պարեմիկ, սահաւոր, սկիթոնն, վատամտել, վարոցել, վտարանդիկ, տրատէ, ցրտամիտ. փալանիկ ևն:

Այս խմբի բառերից առանձնանում են վեցը՝ աբիոն, կրկտել, սերկ, սերկածին, վարոց, տոմ, որոնք կան և՛ ՆՀԲ-ում, և՛ ԱԲ-ում: Ըստ որում սերկ-ի համար բնագրային օրինակը բերված է 14-րդ, իսկ տոմ-ի համար՝ 13-14-րդ դարերի աղբյուրներից: Իսկ ինչ վերաբերում է մնացած չորսին, ապա դրանք վկայված են 5-10-րդ դարերի գրավոր աղբյուրների համապատասխան օրինակներով, ուստի չեն կարող դիտվել իբրև նորահայտ բառեր:

Նշված խմբի մնացած շուրջ 100 բառերը բացակայում են թե՛ ՆՀԲ-ում, թե՛ ԱԲ-ում:

Երկրորդ խմբի բառերը (նկատի ունենք նաև ոճերն ու դարձվածքները, որոնք կտրվեն սկզբից դրվող գծիկով) թվով բավական շատ են՝ շուրջ 350: Հեղինակը համբերությամբ մեկ անգամ ևս աչքի տակով անցկացրել է 5-11-րդ դարերի հայ մատենագրության տպագիր աղբյուրները և քաղել դրանցից հիշյալ մեծաքանակ բառերը, որոնք պետք է դիտվեն իբրև նորագիտ բառեր այն իմաստով, որ տվյալ ձևով, ամբողջական կամ իրենց որևէ մասնավոր ճշմանակությամբ արձանագրված չեն գրաբարյան բառարաններում՝ ՆՀԲ-ում և ԱԲ-ում, կամ էլ ներկայացված են միայն ԱԲ-ում, սակայն առանց հեղինակային վկայության: ԱԲ-ում ճշված 350 բառերից մոտ հարյուր հիսունը հանդիպում են միայն ԱԲ-ում, իսկ ԳԲ-ի շնորհիվ դրանք առաջին անգամ ներկայացվում են 5-11-րդ դարերի համապատասխան բնագրային վկայություններով, որով էլ լուծվում է դրանց գործածության ժա-

մանակաշրջանի հարցը: Ահա դրանց մի մասը. ակոյեանաբեկ, աղուաներէն, աղտապիղծ, այսամիտ, - այր զարամբ ելանել, ապիդատ, առատագուարթ, աստուածազուակ, արծաթահալութիւն, բաժակագող, բաստեոն, բացածգել, գեղեցկաբոյս, գետնաբեկ, -գուպարս նստել, գուսան, գրթախաղաց, դանդան, -դարիւ և դարիւ, եկեղեցուան, եռաշարժ, երկաթահարեալ, գրուցատրաբար, թարխանութիւն, թեպեկ, թերի, ժանգառագոյն, ժողովրդակեցոյց, իգաչարչար, լարանոց, լուսածնութիւն, խածութիւն, խիւս, խնամաւորել, խորէջք, խորշակաբեր, -խրատ առնել, կահակիր, կեղծոտել, կերպասանիւթ, -կին մարդ, կիւնիկ, կողոպտել, կոյաջուր, կորովատեզ, կոակործան, հայակողմն, հանդերձագին, հրաշապանոյն, հրատանջ, ձիահեծեալ, ձորաբերան, ճերմակածի, մահադարձ, մարգարտաձև, մեծահայց, մեծապաշտօն, մուրտաստան, յոգնավայելուչ, շանթել, ոսկեխնձոր, ոսկեթեզան, ուռնադղորդ, չղջրկանման, պերճագարդ, պսակաբաղձիկ, վիմահասակ, տաճկական, տատակածին, փարշաման, քանդակակերպ ևն:

Այս ենթախմբի բոլոր բառերը քաղված են հիմնականում Կաղանկատվացու, ինչպէս նաև Ագաթանգեղոսի, Փարպեցու, Սեբեոսի, Թ. Արծրունու, Փ. Բուզանդի, Եղիշեի, Խորենացու, Ոսկեբերանի, Կորյունի, Նարեկացու և այլ հեղինակների երկերից:

Նշված խմբի մնացած բառերը, որոնք նախորդների համեմատ բավական շատ են՝ շուրջ 200, այս բառարանի բերած կարևոր նորություններից են, քանի որ դրանք ամբողջությամբ կամ իրենց որևէ մասնավոր նշանակությամբ տեղ չեն գտել ոչ մի բառարանում և չնչին բացառություններով առաջին անգամ արձանագրվում են սույն երկհատորյակում: Ահա դրանց մի մասը. -արեուու ցուցանել, արժանահատոյց, բազմասերութիւն, բազմաւորք, բահիկ, բառնալ, -բարձեալ թողեալ լինել, -բնական ազդեցութիւն, -բոկ եւ հետի, գանձ, -գանալից առնել, աղեղնաձայն, -աման ցանկութեան, այլոցկերութիւն, անկշռելութիւն, անհարթ, առանց, գեղիկ, գլխովիմբ, գործել, -դարան գործել, -դեղ դնել, -դիմադարձ լինել, ե-

պերելի, -երբ եւ է, երբեմնի, երկաթահանութիւն, երկնաղէզ, ըմբռնելիք, թշրին, իրաւունք, խարել, խնամող, խօզակեր, ծայրայնապաիչ, կտահատ, հագրէ, հալատակ, հզօրիմաց, ճամբար, ձգել, մածնուլ, մանտատոր, մարդակերպարան, յատակ, յաւանակ, յօդուած, տակառապետ, ոսկեխաչ, ովկիանոս, պաճուճել, պարգեախոստ, պիտակ, ջերմախանդ, սաթ, սարոտ, տաշտ, տապել (իմ), քաղհանել, քաղցրերգանալ, քանոն ևն:

Վերոհիշյալ 200 բառերը քաղված են հիմնականում դարձյալ Կաղանկատվացու, Եզնիկի, Խորենացու, Բուզանդի, Եղիշեի, Փարպեցու, Սեբեոսի, Ասողիկի, Նարեկացու, Թ. Արծրունու և այլ հեղինակների երկերից:

Պետք է նկատել, որ երկրորդ խմբի շուրջ 350 բառերից անհամեմատ շատ օրինակներ են բերված հատկապես Մ. Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» գրքից: Ինչո՞վ բացատրել այս: Չէ՞ որ ՆՀԲ-ի հեղինակներն օգտագործել են նաև այս աղբյուրը: Հարցի պատասխանը տալիս են հենց ՆՀԲ-ի հեղինակները՝ նշելով, որ իրենց տրամադրության տակ ունեցել են Կաղանկատվացու նշված երկի միայն պատահիկները, իսկ գիրքն ամբողջությամբ իրենց ձեռքն է հասել բավական ուշ, այն էլ «խառնակ և սխալ գրչութեամբ» (հ. Ա, էջ 13):

ԳԲ-ում կան բնագրային վկայություններ ունեցող շուրջ ութ տասնյակ բառեր, որոնք ընդհանրապես հանդիպում են և՛ ՆՀԲ-ում, և՛ ԱԲ-ում: Այս դեպքում մասն օրինակներն արդարացվում են նրանով, որ դրանք առավել համոզիչ են դարձնում տվյալ բառի նշանակությունը առավել հստակ մեկնությամբ կամ ճշգրիտ ստուգաբանությամբ: Ասվածը հիմնավորեմք մի քանի օրինակով: Փարազուն բառը, որ մեկ անգամ գործածված է Դատաւորաց գրքի 5-րդ գլխում, ՆՀԲ-ում բացատրված է այսպէս. «Որպէս թէ փառագուն, փառագն, փառաւոր, և ճոխ ըստ ազգի, հարուստ, հզոր» (հ. Ա, էջ 936): Ստ. Մալխասյանցի բառարանում այն համարվել է անհայտ նշանակությամբ բառ, որը ոմանք ենթադրաբար թարգմանել են ազնվական կամ գյուղա-

ցի, ոմանք էլ՝ դատավոր, շեն, ավան, ևն¹: Այս նույն բանն է ասված նաև ՀԱԲ-ում²: ԳԲ-ում տրվել է այս բառի համոզիչ պատասխանը, ըստ որի այն ունի պարսկական ծագում և նշանակում է գորավար³: Պետք է ասել, որ ս. էջմիածնում 1994 թ. հրատարակված «Աստվածաշնչում» ևս նշված բառը թարգմանված է գորավար:

Միահանգեք բառը մեկ անգամ գործածվել է Փավստոս Բուզանդի «Պատմության» մեջ: ՆՀԲ-ն այն մեկնում է որպես «խաղ, կատակ, միմոսություն, կամ կեղծաւորութիւն»⁴, իսկ ՀԱԲ-ը⁵, ինչպես նաև Ստ. Մալխասյանցը⁶ այն համարել են անստույգ նշանակությամբ բառ: Ստ. Մալխասյանցը Բուզանդի գրքի ծանոթագրություններում նշում է, որ ինքն այդ բառը թարգմանել է միջոց⁷: ԳԲ-ում բառիս ստուգաբանության հարցը վերջնականապես լուծված է, ըստ որի այն ունի պարսկական ծագում և նշանակում է «պատուակ, սուտ պատճառ, միջոց»⁸:

ՆՀԲ-ում կան բազմաթիվ այնպիսի բառեր, որոնց գործածության ժամանակաշրջանը հնարավոր չէ պարզել այդ բառարանի օգնությամբ, քանի որ բնագրային վկայություններն այդտեղ բերված են ուշ շրջանի մատենագրությունից: Նման բառերը, անշուշտ, միայն վերապահությամբ կարելի է համարել ուշ շրջանի իրողություններ, քանի որ անհնարին չէ, որ դրանց մի մասը գործածված լինի հենց

գրաբարյան շրջանում. բայց ինչ-ինչ պատճառներով արձանագրված չլինի ՆՀԲ-ի հեղինակների կողմից: Սույն բառարանը հնարավորություն է տալիս լուծելու մոտ երկու տասնյակ նման բառերի գործածության ժամանակի հարցը: Դրանք են. ամիրապետ, առոգումն, արուսպղծություն, անկղիտանալ, գթասեր, զարհուրելի, ընդակեր, ժանտաբարոյ, -կըրկին անգամ, հեճուպ, հրատոչոր, ճոռոդումն յիսնանիթեայ, նանրալեզու, ցողիկ, փայքար, քարուկիր, օտարախորթ, որոնց համար ՆՀԲ-ում բերված են համապատասխան օրինակներ 12-14-րդ, իսկ ԳԲ-ում՝ 5-11-րդ դարերի գրավոր հուշարձաններից:

Մեր հաշվումներով երկհատոր ԳԲ-ն պարունակում է շուրջ 49 հազար բառ՝ տարբերակներով հանդերձ, որից ավելի քան 3 հազարը ոճեր ու դարձվածքներ են: Արդյո՞ք 5-11-րդ դարերն ընդգրկող գրաբարի բառապաշարն այսքանով սպառվում է: Մեր խորին համոզմամբ ապագայում այդ թիվը կարող է զգալիորեն փոխվել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ հարյուրավոր գույք և հազարավոր բառեր տակավին թաղված են մնում դեռևս անտիպ ձեռագիր մատյաններում կամ մնացել են չնկատված տպագրված աղբյուրներում:

Հ. Մ. Ավետիսյան

¹ Տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայերենի բացատրական բառարան, հ. 4, Երևան, 1945, էջ 190:

² Տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 485:

³ Տե՛ս ԳԲ, հ. Բ, էջ 595:

⁴ Տե՛ս ՆՀԲ, հ. Բ, էջ 266:

⁵ Տե՛ս ՀԱԲ, հ. Բ, էջ 319:

⁶ Տե՛ս Ստ. Մալխասյանց, անդ, հ. 3, Երևան, 1945, էջ 323:

⁷ Տե՛ս Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, հ. 4, Երևան, 1968, էջ 342:

⁸ Տե՛ս ԳԲ, հ. Բ, էջ 183: